ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության Կառավարության և
Լատվիայի Հանրապետության Կառավարության միջև կրթության,
գիտության և տեխնոլոգիաների ոլորտում համագործակցության մասին»
համաձայնագրի
ստորագրման նպատակահարմարության վերաբերյալ

Համաձայնագրի ստորագրումը նշանակալի քայլ է՝ կրթության և գիտության բնագավառներում երկու երկրների միջև համագործակցությունը ամրապնդելու և երկուստեք փոխշահավետ գիտակրթական կապեր հաստատելու համար:

Համաձայնագիրը հնարավորություն կընձեռնի Հայաստանի և Լատվիայի կրթական հաստատությունների միջև անմիջական համագործակցության և շփումների հաստատմանը, ինչպես նաև երկու երկրների միջև ուսանողների, ուսուցիչների, դասախոսների և հետազոտողների փոխանակման ծրագրերի իրականացմանը:

Համաձայնագրի ստորագրումը կնպաստի Հայաստանի և Լատվիայի միջնակարգ, բարձրագույն և հետազոտական հաստատություններում իրենց պետական լեզվի, գրականության, պատմության և մշակույթի ուսումնասիրմանը և դասավանդմանը, ինչպես նաև մեթոդական ձեռնարկների և դասագրքերի փոխանակմանը:

Համաձայնագրի ստորագրումը և դրա օրինական ուժի մեջ մտնելու գործընթացն ավարտելուց հետո կողմերի միջև կկատարվեն կրթաթոշակների, տեղեկատվության, մանկավարժական և մեթոդական հրապարակումների և այլ ուսումնական նյութերի փոխանակումներ:

/ ՀՀ կրթության և գիտության նախարար